

կական դատարանների գործունեությունը դադարեցվեց: Դրանից հետո հայեռն ենթարկվում էին համառոտական պետական և դատական օրենքներին: Միայն մի իրավունք հայերի մոտ դեռես կրկար ժամանակ տնխախտ մնաց, դա իրենց ներքին վեհերը ընտրովի միջնորդների միջոցով լուծելու իրավունքն էր:

Հայկական դատարանը վարում էր միայն հայերի վերաբերյալ դատական գործերը, վճռում հայերի միմյանց հետ ունեցած վեհերը, ժառանգություն և դույքի բաժանման հարցերը, վարում էր քրեական մանր ու քաղաքացիական դատական գործեր, հսկում էր հարկերի բաշխմանը և հավաքմանը, նորեկ հայերին ընդունում էր ոռուհա-հպատակ և տալիս անձնագրեր:

Հայկական դատարանը քննում էր նաե հուլային վեհերը և ակտիվ գործունեություն էր կատարում այգեդործությունը դարպացնելու և թերեք գեաի ափերը ամրացնելու ուղղությամբ:

Հայկական դատարանի դատավորներն ընտրվում էին հայ քաղաքացիների ընդհանուր ժողովում: Հայ դատավորը ամեն կերպ աշխատում էր օգնել դիմողներին բարի խորհուրդներով, հասնել կողմերի հաշաեցման, վեհի խաղաղ լուծման: Հակառակ դեպքում, նա սաիաված պեաք է առաջարկեր կողմերին բողոքելու դատական ավելի բարձր ատյանին՝ պեաական քաղաքացիական պալաաին:

Հայկական դատարանն էր խնամակալներ նշանակում փոքր, որբացած երեխաների վրա: Խնամակալին իրավունք էր վերապահվում որբի դրամական միջոցներից ծախսումներ անել իր հայեցողությամբ՝ առանց վնաս հասցնելու որբի շահերին: Դատարանը միջնորդ էր նաև ժողովրդի իրավունքները պաշտպանելու գործում: Նա էր կատարում բերդի պարետի և քաղաքային այլ պաշտոնական հասաաաությունների օրինական պահանջները և բացատրում ժողովրդին պեաական

օրենքների իմաստը: Հայկական դատարանը քննում էր հայ քաղաքացիների բանավոր գանդատները, ստկայն չէր գրաղվում քրեական մեծ գործերի քննությամբ: Այդ գործերի քննությունը վերապահված էր դավառական ոսաիկանության ու պեաական դատարանին:

Հայկական դատարանի անդամ էին ընտրվում երեք հոգի: Սբանք պատկտոելի, անվանի ու ծանրակշիռ անձնավորություններ պետք է լինեին: Վկաները երգվում էին ավետարանով:

Հաստրակակտն մեղադրողներ չկային: Դատական գործերը քննելիս երկու կողմերի ներկայությունը պարտադիր էր: Կողմնակի մարդկանց թույլատրվում էր դատավարությանը ներկա լինել, որոնց կարծիքը երբեմն հաշվի էր առնվում: Դատարանը սկզբունքով առաջնորդվում էր ոռուսական պետական բանավոր օրենքներով: Մեծ չկար, սուտ խոսելու համար երգվեցնում էին: Դատավարության դբագրությունը կատարվում էր հայերեն և ոռուսերեն:

Կային հանցանքներ, որոնք պաաժի չէին ենթարկվում, օրինակ՝ հարբած վիճակում իրար ծեծկատելը, երես արյունոակելը, խոսքով վիրավորանք հասցնելը և այլն: Որպես պատիժ հանցավորին դրամական աուդանքի էին ենթարկում, մանր գողության համար՝ մի քանի օրով բանտ էին նսաեցնում: Ինչ վերաբերում է անչափահասներին, նրանց նկաամամր պաաիժը ավելի մեղմ էր: Կանանց ամոթխածությունը վիրավորելը ծանր հանցանք էր համարվում, հանցավորը հասարակության անարպանքին էր արժանանում:

Փասաեր կան, թե ինչպես Ղլլարի հայ հասարակությունը պայքարել է նաև պաշաոնական անձերի ոռնձղությունների դեմ, ի պաշտպանություն այն արաոնությունների ու իրավունքների, որ ժամանակին սաացել էր ոռուաց կառավարությունից (աե՛ս Մատենադարան, կաթողիկոսական արիիվ):

Հ Ա Վ Ա Տ Ա Ղ Ի Ք Ն Ե Ր

Ղլլարի հայ ընակչության պաշաոնական կրոնը քրիսաոնեական հայ լուսավորչական կր-

րոնն էր: Ղլլարում հայ կաթողիկներ և բողոքականներ չկային: Եկեղեցական բոլոր ծիսակատարությունները կատարվում էին անփոփոխ, ինչպես սուրբ էջմիածնի մայր աաճարում:

Ղլլարցիների ամենասիրած սրբերն էին Մարիամ Ասավտժածինը, ս. Գեորգը, ս. Գրիգորը և

⁵ Տե՛ս «Свод законов Российской империи», т. X, ч. II, 1857, стр. 261 (№ 1436).

սուրբ Սարգիսը: Արանց տնուններով եկեղեցիներ կային Ղզլարում:

Մեծ տոները, մանավանդ ամառվա կրոնական տոները, Ղզլարցիք, ինչպես նշել ենք, դերադասում էին կատարել ս. Գեորգի ուխտավայրում, որի շրջակայքում փարթամ բուսություն կար: Պետք է ասել, որ ս. Գեորգ ուխտատեղի էին հաճախում նաև անդի մահմեդականները:

Ղզլարցիների տներում ընդունված էր սրբերի պատկերներ կախել պատի մի անկյունում և նրա աակը տոն օրերին կանթեղ վառել: Տներում կարելի էր տեսնել ավանարանը, որի կողքին շատերի տանը՝ նաև «նարեկը»: Հաղվադյուա չէին և «Եփրեմվերդին» ու Երազահանը: Մասնավոր անեղում խաչ կամ սրբերի մասունքներ չէին պահում. դրանք եկեղեցու ծառայողներին պահպանելիք իրեր էին, նրանց մոտ էլ կարելի էր անեսել:

Հայ հասարակությունը ընդհանրապես հարգանքով էր վերաբերվում հոգեորակտների նկատմամբ: Փողոցում պատահելիս հայ հավաաացյալը մոտենում էր քահանային և աջը համրուրելով, տնում՝ «Օրհնյա, տեք», որի պատասխանն էր լինում՝ «Աստված օրհնի»: Քահանային և տիրացուին հրավիրում էին կնունքի կամ նշանի, նոր բնակտրան օրհնելու, ծանր հիվանդի մոտ և այլն:

Այս ամենի դիմաց քահանան վարձաարվում էր դրամով, որի համար սահմանված դին չկար կամ թե նվեր էր ուղարկվում քահանայի աունը:

Բախա և ճակատագիր: Հավատում էին, որ մարդու ճակատին ինչ-որ դրված է, այն էլ կկատարվի: Ծակատագիրը դուշակում էին դրոացները, «փալչիները», ձեռք նայողները: Օրինակ, գրոացը դուշակվողին պտրաավորեցնում էր փակած ալքերով մատը ղնել դրքի որոշակի տեղում դրված տառերի վրա կամ նույն դրքի ողե է նկարել վրա ու կարդում էր «խեր ու շաոի» մասին, թե ինչ է լինելու դիմողի ճակատագիրը: Ձեռք նայողը մարդու ապագան դուշակում էր նրա ձեռքի ափի զծերին նայելով: Փալչիներն էլ դուշակում էին մանր քարերով կամ սխեոի, լորու հատիկներով, ոմանք հայելու վրա կամ խաղաթղթերով:

Քարերը տարրեր ձեի և գույնի էին. դրանցից մի քանիսը թալիսմոնի պես օղակված էին մետաղով՝ շրջանաձե կամ խաչաձե: Յուրաքանչյուր քար ուներ, անշուշտ, իր նշանակությունը: Փալչին մի քանի անգամ երկու ափերի մեջ քաղերը խառնելուց հետո փռում էր սեղանի վրա և նրանց շարվածքից ու դիրքերից ղանաղան դուշակու-

թյուններ անում, որը միայն ինքն էր հասկանում:

Մեր դարի սկզբից Ղզլարում հայտնի էր «դիժ» կամ «Ղաջար» Կատոն, որն, ասում են, «հրաշքներ» էր դործում: Ներկայումս Ղզլարում ապրում է մի պառավ ֆալչի, որը դուշակում է խաղաթղթերով: Դա Ունանաց Հորոսն է:

Խաղաթղթերին տրվում է ղանաղան նշանակություն: Թղթերից մի քանիսը ցույց են տալիս ուրախություն, լավատեսություն, բարի համարվ, մյուսներն ընդհակառակը՝ վիշտ, արամություն, բոթ: Կան և չեղոք թղթեր: Եթե մի քանի անգամ խառնելուց հետո քարաերը դալիս են ու իրենց տեղերը դրավում, ուրեմն «փալը» ճիշտ դուշակվեց:

Գեանի և ջրի պաշտամունք: Հողը սրբություն էր համարվում, ամեն ինչի հեա մարդն էլ հողեղեն էր համարվում, որը վախճանվելով, նորից հողի էր վերածվում՝ «Հող էիր և ի հող դարձիս»:

Ննջեցյալին թաղելիս նրա դագաղի վրա, մինչև դերեղմանը ծածկելը, երեք անգամ մի-մի բուռ հող էին ցանում: Երբ հայրենիքից երկար ժամանակ բացակայելուց հետո հայը նորից ոաք էր դնում իր հայրենի հողը, դրանից մի բուռ վերցնում ու համրուրում էր:

Պաշտամունքի առարկա էր նաև ջուրը:

Ջուրը կենդանություն էր աալիս ղաշաերին և արտերին, ջրի ջնորհիվ հասնում են խաղողը, պտուղներն ու հացահատիկը, ջրով են իրենց ծառավը հագեցնում մարդն ու անասունները, ջրով են ապրում ձկներն ու ջրային կենդանիները: Հավատացյալները «օխնված ջրով» մարմինը շփելով հիվանդությունը «հանում» էին, այդ ջրով ապականված ամանները լվանում, մաքրում էին: Այս ամենի համար էր ջուրը պաշտվում:

Երբ արաերին և բուսականությանը երաջա էր սպառնում, (եկեղեցականները թափոր կաղմսծ խաչ ու խաչվառով ղնում էին Թերեքի ափը և նրա ջուրն օրհնում, որ ասաված պապակած երկրին հորդ անձրե ուղարկի: Վարդավաոի աոնը իսկական ջրի աոն էր: Այդ օրը բոլորը միմյանց վրա ջուր են ցանում կամ ջուրը դցում:

Հողով և ջրով մաղղիկ երզվում էին՝ «էս հողը վկա», «էս ջուրը վկա»:

Կրակի պաշտամունք էլ է եղել: Կրակի պաշտամունքի աոն էր «Տեաուն-ընդառաջ»-ը փետրվար ամսին: Եկեղեցում ժամերդությունը վերջանալուց հետո, մարղիկ վառած մոմերով տուն էին վերադառնում, իսկ այդ ժամանակ փողոցներում

ե րակիրում սովորաբար խարույկներ էին վառում: Ամբողջ բաղաձոր լուսավորվում էր խարույկների բոցերով: Պատանիներն ու երիտասարդները հավաքվում էին խարույկների շուրջը, պարում ու թրջում էին բոցերի վրայով: Նորապսակները պտրտվում էին խարույկի շուրջը, հավաքալուով, որ սերունդ կունենան, Նույն էին անում նաև անզավակ դույզները: Կրակի մեջ թքելը մեղք էր համարվում: Կրակով կրգվում էին՝ ձիւ օջախի կրակը վկայ:

Անահավատություններից հեաքըքիր էր այն համոզմունքը, որ շունը գուշակելու ընդունակություն ունի: Եթե շունը լուսնին նայելով ոռնում էր, ասում էին՝ մի աղետ կամ դժբախտություն կլինի: Ասում էին, եթե շունը միալար ոռնում է և նայում սան դռանը, ապա այդ անից մեկը կմեռնի:

Կատու սպանելը մեղք էր համարվում: Եթե կատուն թաթիւ լիղելով լվանում էր երեսը, ասում էին հյուր է դալու: Ասկայն կատվից ղղուջանում էին, վախենում նրա վրիժառուությունից: Ասում էին՝ սե կատու ասանը պահելը վատ է, նրան նրամանեցնում էին սաաանային:

Ձիւ համարվում էր մարգու ամենահավաարիմ կենդանին: Եթե ճանապարհին ձիւն հանկարծ խրանելով կանդներ և, չնայած քշողի թախանձանքներին, համառորեն անդից չշարժվեր, ապա ենթադրում էին, որ աղետում վաանդ կա, վերադառնում էին աուն: Ձիւ դանգը կախում էին այդում՝ շար աչքից բերքը պաշապանելու միտումով:

Աքաղաղը ռարի լույս» ավետող թռչուն էր համարվում: Վաղ առավոտյան իր կանչով նա «փախցնում» էր շար ողիներին: Ասում էին, թե աքլորի քայլվածքը վեհ ու թեթև է, որ ոաքերը պետին չխրվեն, աշխարհը չկործանվի: Նա կարի վրա մի ոաքով է կանդնում, որ սյունները չկոարրվեն, աունը չփլվի: Եթե աքլորը թառելուց հետո ծուղորուղու էր կանչում, ապա կռիվ ու փորձանք էր սպասվում:

Երբ հավր սկսում էր աքաղաղի պես կանչել, նրա դուրան իսկույն կարում էին, որ ձախորդություն չպաաահի:

Ղզլարում թխում էին նշով հաց և խուրաբի: Դրանց աալիս էին զանաղան ձևեր, երբեմն նաև ձկան, դառան և աղալնու:

Վայրի կենդանիներից ամենաաաելին դայլն ու շախկալն էին, որոնք մեծ վնաս էին հասցնում

բնակչությանը: Նրանց պիշեղային ոռնոցը վատ գուշակությունների առիթ էր տալիս:

Օձը դիտվում էր թե՛ որպես շարության ծրնունդ, թե՛ աղնիվ ու բարի արարած, որովհետև նրա թույնից պաարաաում էին բուժել դեղեր:

Չղջիկից ժողովուրդը վախենում էր, մարդկանց մեջ նա սարսուռ էր առաջ բերում: Նրան համարում էին շար ողի, սաաանայի մարմնացում: Կար այն կարծիքը, որ եթե չղջիկը մարդուն կպչի, նա շուտով կմեռնի: Աղալնին ու ծիծեռնակը համարվում էին աղնիվ թռչուններ: Արանց սպանելը մեղք էր: Ասում էին, իրեն ծիծեռնակի բունը քանդողի աունը ասաված կքանդի:

Արևը և լուսինը երկար ժամանակ պաշաամունքի առարկաներ էին: Երգվում էին՝ ձիւ արևը վկայ», «երեխիս արևը վկայ»: Արևի խավարումը համարում էին պաաներազմի և արյունահեղության նշան: Եթե արևի կամ լուսնի շուրջը կամար էր կալում, ասում էին՝ անձրև է լինելու կամ ցուրտ:

Հավաաում էին, որ ամեն մարդ իր ասաղն ունի երկնքում, որ երբ մարդ հիվանդանում է, նրա ասաղը ո՞րոշ ժամանակ «խավարում» է, իսկ երբ մարդ մեռնում է, նրա ասաղը «վայր է ընկնում»: Երկինքն այն անդն է, ուր դանվում են ասաված և բոլոր սրբերը: Այնակղ են նաև դրախտան ու դժոխքը: Հավաաում էին, որ կպա մի օր, երբ երկինքը կբարուրվի և դրանով կվերջանա աշխարհը: Ասում էին, որ արևը աղա է, որովհետև դուրս է դալիս ցերեկով, իսկ լուսինը՝ աժթխած աղջիկ, որն իր շարմաղ երեսը ցույց է աալիս աշխարհին միայն դիշերով:

Հնում հայերը ճանաչում էին լուսասաղը կամ Արուսյակը, Հյուսիսային, Մեծ ու Փոքր արջերը և Հարդագոգի ճանապարհը:

Դիսավոր ասաղից մարդիկ սարսափում էին և սսում՝ «սա աշխարհի վերջն ա»: Ինչպես նշել ենք, մարդիկ կայծակից էլ էին վախենում: Ամսրոպի. ու կայծակի ժամանակ մարդու մոտ չպիտի դանվեն շուն, ձի, ծառ և այլն: Եթե անձրևն անդադար մի քանի օր թափվում էր, ապա առաջնեկ աղայի ձեռքը շամփուր էին տալիս, որ՝ նա ասին ու բակի մեջահղում ցցի: Անձրևն իսկույն «պաաք է» դաղարեր:

Ծիածանին Ղզլարում ասում էին «կանաչկարմիր»: Երբ նրա կանաչ գույնը վառ էր, ասում էին՝ տարին բերքաաու կլինի, իսկ կթև կարմիրն

էր վառ, ասում էին՝ կոխվ, պատերազմ կլինի:
Հավատում էին նաե ոգիներին: Ասում էին՝
կան րարի ե շար ոգիներ: Չար ոգիները զանազան
անուններ ունենին՝ աչք, սաաանա, կրող (դրող),
որոնց պատկերացնում էին կնոջ կամ աղամար-
դու կերպարանքով: Եթե սատանան դեմքով աղա-
մարդ էր, նրա ոտքերը սմբակավոր պիտի լինեին,
եթե կին՝ պոչ ե երկտր մաղեր¹:

Հավատում էին, որ յուրաքանչյուր մարդ ու-
նի իր պահապան հրեշտակը, որը նրան տմեն չա-
րիքից պաշտպանում է: Գարրիել հրեշտակապե-
տին համարում էին հոգեառ հրեշտակ, որը ճեռ-
նոգի հոգին առնում, տանում է երկինք:

Կարծում էին, որ շարքերը, աչքերը, սաաա-
նաները ապրում են շարդախներում, ջրհորնե-
րում, քանդված աներում, վառարանների մեջ,
պատերի խոռոչներում, անտառում, դերեղմանա-
տանը ե մութ անկյուններում: Ասում էին, որ
նրանց բռնելը շաա դժվար է, բայց եթե հաջողվի
մեկն ու մեկին բռնել, ապա նա բռնողի ճեսիրը»
(ստորուկը) կդառնա: Ե ինչ ծառայություն ուղես կա-
նի:

Մարդիկ հավատում էին, ոգ իրրե աչքերը
դիշերով մտնում են ախոռը, նստում են ձիերի
վրտ, նրանց վաղեցնում, տանջում, քափ ու քըր-
տինքի մեջ դցում: Անկնունք երեխաներին նրանք,
իրրե թե, օրորոցից դողանում են, դանաղան հի-
վանդություններ պաաաաում, վնասներ են հասց-
նում ժողովրդին:

Վախենում էին նաե սե կաավից, որովհետե

¹ Այդ աթիվ պատմում էին զանազան թիրոգություններ: Ահա դրանցից մեկը. «Չուի Պեարոսը ապրում էր քաղաքի ճոնդմբ: Մե մութ գիշեր սա տուն ա կամ, տունին չի հասած սրա տուչը կտրում են շորս-հինգ օքմին կնանիքի կերպա-
րանքով, լուսնյակ երեսու, աչքերը կարմիր, մաղերը ծիք, դի-
փունանքը՝ պոչավոր: Պըռնըմ են Պեարոսին, թըեելով իրա
տուն են տտնըմ, քցըմ են տափին, իրենք էլ նրա վրեն,
սկսըմ են պար կալ ու հոհեղ (ծիծաղել):

Եզով նրա աչքերը կապըմ են յայլուղով, իրան քցըմ են
տան մեշտեղը ե հարկազըըմ են, որ իրա քթից քաշողին
պոնի: Խեղճ Պեարոսը դես ա ինգնըմ, դեն ա ինգնըմ, պոնել
չի կարնըմ. վերլը հալից ինգած նստում ա, որ մի քիչ նաֆաս
քաշի, սատանեքը չեն թողնում, նրա ծեռ ու ոաը կապըմ են,
իրան սկսըմ են մեմեկու վրեն շպրաել, քիթ ու մոտթը ճառ-
թըըմ ա, ուգում ա հաուայ տա, պայց ծենը չի տուա կամ:

Էսպես սաղ քիշեր Չուի Պեարոսին աանըմ են, լուաա-
գեմին թողնըմ, փախնըմ են:

Մյուս առավոտ Պեարոսին քըթնըմ են իրա աանը աա-
փին ուշաթափ ինգած, անխոս: Եփոր ուշկի ա կամ, ինքը
պատմըմ ա խալխին քըերվա իրա կլխին էկածը» (պաամել
է 89-ամյա Մոֆիա Պապովյանցը):

շատերը հավատում էին, որ շար ոգին կարող է
կաավի կերպարանք ստանալ: Եթե սե կատուն
կտրում էր ճանապարհը՝ դժբախտության նշան
էր, ճանապարհը պեաք էր փոխել: Կարծում էին,
որ ձին կարող է շար ոգիներին վախեցնել, ուստի
տան շեմին ձիու պայտ էին ամրացնում, պատշտ-
պանում տունը շարությունից:

Թափված աղը կովի նշան էր: Այդ շարիքի
դեմն առնելու համար աղը երկու մատով վերց-
նում ե նետում էին ուսի ետեը՝ երեք անգամ:

Աքաղաղի կանչը դոան շեմին ճամփորդ դա-
լու նշան էր: Դոտն ջեմին ձեռք աալը կնշանակեր
րարեկամների խոռվ իրտը դեմ: Երր կաշտղակը
կշկշալով նստում էր կտրին. նամակ էին սզա-
սում: Դատարկ կփին, դուլլին տատահելը վատ
նշան էր համարվում: Դատարկ օրորոցը չէին օրո-
րում, դա երեխային ճվնաս կրերեր: Խուղած
մաղը գցում էին կրակի մեջ, ու գլխացալ շատա-
նան: Մաղը աղրի հետ դուրս չէին դցում, որով-
հետե մաղը կտրող էր աղրի մեջ քուջուջ անող հտ-
վի ոտքին փաթաթվել, հավը «կանիծեր» մաղի
տիրոջը ե նրա գլխի ցավը երեք չէր անցնի:

Կտրած եղունդները թաղում էին պատի տակ,
մի աննշմարելի աեղ ե տում:

«Ուղունդ, ուղունդ էստեղ կաց,

Եվա, Ադամ, վկա կաց,

Եփոր ուղեն, հաղիր կաց»:

Կարծում էին, որ ում տանը եղունդ կտրես,
իեկդ, միտդ ալնտեղ կլինի: Եղունդ կըծողը
պետք է որ րկացալ ստանար: Եղունդի վրա ճեռ-
րեկ» ունենալը՝ նոր ջոր հագնելու նշան էր հա-
մարվում: Եթե նոյեմբեր ամսին տանդ մեջ ճանճ
թուշեր, ասում էին՝ տանը լիություն կլինի: Եթե
կինը տղամտրդու գլխտրկ հագնեեր, գլխի մաղերը
պիաի թափվեին: Կաաուն աան շեմքին երես վկա-
նար, կասեին՝ ճէսօր դոնաղ ա դալուա: Իսկ եթե
կատուն նսաեր երեսը աանաիրոջից շուտ ալած,
կասեին ճմեկը մեր վրեն խոսմ ա, օսկոտ տուս
գա նրա լեղվին»: Մարդու աչքը սառելիս ասում
էին՝ «Աչկը ճամփին մնացա կամ ճամփորդ ա
դալուա»:

Լեղվի քոր դալը՝ վատ խոսք լսելու, կովի նը-
շան էր համարվում:

Երր մարդու երեսն հանկարծ կարմրում էր,
նշանակում է՝ նրան բամբասում էին: Ուտելու
ժամանակ դանակի կամ պաաաաաղի վայր
րնկնելը նշանակում էր, որ տունը հյուր է գալու.
դանակը՝ աղամարդ, պատառաքաղը՝ կին:

Պատգամներն ասում էին՝ «Ով որ էրված հաց ուտի, նա փող կդռնի»։ Եթե ճաշի ժամանակ տուն եկած հյուրը հրաժարվում էր ճաշից, ասում էին՝ «Մեղ հետ չես ճաշի, ուրեմն կուղես, որ մեր աղջիկը տանը մնա, մարդու չգնա»։ Եթե ճաշի ժամանակ եկող հյուրը տղամարդ էր, կասեին՝ «Ձորանիդ սիրելին ես»։

Ձևերի մեջ բոլր գալը՝ փող ստանալու նշան էր համարվում։ Ասում էին՝ «Ձերին խփիր, որ փող լինի, մեջքին խփիր, որ առողջ լինի»։ Նոր լուսին տեսնողը պետք է մազերից մի քիչ կարեր, որ մաղն անի։ Փոշտալու ժամանակ մեջքին խփելով, ասում էին «առողջություն»։ Իսկ եթե փռտում էր կրկու անգամ, ասում էին՝ «սարը խեր ա»։

Տունը ավելելուց հետո աղըը գիշերով դուրս չէին թափում, որ տան բարաքաթը դուրս չգա

Անբաթվա օրերին տրվում էր զանազան նշանակություն։ Երկուշաբթին ծանր օր էր համարվում, այդ օրը գործ չէին սկսում, ճամփա դուրս չէին գալիս։ Երեքշաբթին լավ օր էր, բայց այդ օրը լվացք անել չէր կարելի, որովհետև լվացած շալիկը «սրտի մաշուցքով» կկեղատվեր։ Չորեքշաբթին կախարդությունների հաջուկության օրն էր, բարի չէր։ Հինգշաբթին ամենաբարի օրն էր համարվում, այդ օրվա ռոնած գործը հաջող կլիներ։ Ուրբաթը վաա օր էր, Քրիստոսի չարչարանքի օրը։ Շաբաթ օրը նոր գործ չէին ռոնում, որովհետև երկար կաեեր։ Կիրակի իրիկուն ալյուր մազելը վաա նշան էր համարվում։ Նահանջ տալու ամուսնանալը լավ չէր, ամուսնությունը «րախաավոր» չէր լինի, ամուսինները իրար հեռ սերով չէին ապրի։ Նրանցից մեկը «կմեռներ»։

Տ Ո Ն Ե Ր

Ղզլարի հայերի նախնիներից մնացած տոնեն էին նավասարգը, Տեառն-ընդառաջը, ս. Ասուր-յիսր, Բարեկենդանը, Մազկազարդը, Վարդավառը և այլն։ Բոլոր այս տոները հետեում էին իրար որոշ կարգով և կապ ունեին ընթացյան, տարվա եզանակների հետ։ Տարին սկսվում էր նախասարգով։ Այսպես էր կոչվում ամսական առաջին ամիսը։

Նոր տարի (ամանոր)։ Այդ գիշեր Ղզլարի հայերն ըստ հին սովորության (ղեկամերի 31-ի ժամը 12-ին) հրացաններից կրակում էին։ Ամբողջ քաղաքը որոտում էր հրաձգությունից, ղըզլարցիներ «փախցնում» էր հին տարին և մեծ սպասելիքներով դիմավորում նորին։ Մարդիկ իրար շնորհավորում էին, ասելով՝ «Շնավոր նոր աարի», որի պաասախանն էր՝ «Ծեղանով», «Պարով ամեն աարի արժանանաք»։

Ժամը 12-ին ամենքն ոտքի էին կանգնում, ուրախ բացականչություններ, բաժակների ղըընգոց, աղմուկ, ժխոր, շնորհավորանքներ, ցնծություն։ Այդ գիշեր ուրախ էին մանավանդ երեխաները։ Նրանք անհամբեր սպասում էին կես գիշերվա կոչնակին, երբ մայրիկը վերջապես բաց կաններ քաղցրավենիքով լի տարեմուաի սեղանը՝ չամիչ ու թաթարու, չուխեի ու ընկույզ, տանձ ու խնձոր, խազող և ամենաղլխավորը՝ նոր ամսական խորհրդանիշ՝ գոգինաղը։ Այս հին ավանդույթը Ղզլարի հայերի մեջ պահպանվել է մինչ մեր օրերը։

Տարեմուաի գիշերը քաղաքով մեկ ամսական էր հայ և ուս երեխաների ձայնը, որոնք տնից աուն շրջելով, երգելով ու պարելով շնորհավորում էին բարեկամների, հարազատների նոր տարին, որի փոխարեն սաանում էին գաթա, կտրկանդակ, դրամ և այլն։ Ահա այդ երգերից երկուսը։

Ահա եկավ նոր տարի,
Հեաը բերավ նոր բարի,
Մանր լողոց ուրախ օր,
Բարի զավակ հորն ու մոր։

Մանր աղայք են ուրախ,
Ունեն կաղին, դոգինաղ,
Սալորի չիր, չամիչ, թուզ,
Փշատ, ունապ և ընկուզ։

Մանր աղտյք շմոռնաք,
Աշխարհումս չեք մենակ,
Ուրիշ շտտ խեղճ տղայք կան,
Աղբատ և անօղնական։

*
* *

Շնորհավոր նոր տարի,
Ծեր տունը շեն իլի,
Պարով նոր հաքներ,
Միշտ ուրախ իլեք։

Հացը բոլ իլի,
Աչկը կուշտ իլի,